

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Երբ հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են խրատանէլուր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1891 ԹԻՎԱԿԱՆԻՆ

## ՄՇԱԿ

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակուում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդով: Մինք կը ստանանք սեփական շնորհակալութիւններ:  
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՍՄԲԱԳՐԱՏԱՆԸ (հարօնակայա և հաղարնայա փողոցները) անկիւնում, Թամանէկի տանը):  
Կայտարարութիւններ ընդունուում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով բառին վճարում է 2 կոպեկ:  
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրուում, այլ տպագրուում են միմյանց լրագիրները յայտարարութիւնները, մասնացոյցները և պաշտօնական հաստատութիւնները յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնացոյցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:  
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

#### ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Ամուսնական խնդիրներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒՌՈՒԹԻՒՆ: Մի կարևոր ուժ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒՌՈՒԹԻՒՆ: Խորէն պատրիարք Աշքեան. Օսմանեան թէժի ընկերութիւնը. Կամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒՎԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՏԵՂԵՎԱՅՈՑ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակնարկներ:

#### ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԳԻՐՆԵՐ

Մեր առջև դրված է մի բաւական հաստ գիրք, 222 երեսից բաղկացած, որը կրում է վերջիշեղ վերնագիրը և տպված

#### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ԱԿՆԱՐԿՆԵՐ

XII

Մի ամբողջ ամիս Անդրիան և Իրլանդիան տակն ու վրա անկուց և դրդուց յետոյ, վերջապէս հանգիստ կերպարանք առաւ այն խնդրը, որ դէպի Իրան էր գրաւել թէ հասարակաց կարծիքը, թէ մասուլիս, թէ քաղաքական և թէ պարլամենտական շրջանների ուշադրութիւնը:

Կա Պարսէլի խնդիրն է: Գուցէ հայ ընթերցողներից շատերը տեղեկութիւն անգամ չունեն այդ պարսէլական խնդրի մասին, և իրանց ամբողջ տեղեկութիւնը հայոց լրագիրներից քաղելով, գիտեն միայն, որ կայ մի Իրլանդիա, որ այդ Իրլանդիան ունի մի նշանաւոր գործող և այդ նշանաւոր գործողն անունն է Պարսէլ: Ուրիշ ոչինչ:

Մի դրոշմ ընթերցող հասարակութիւնը այն բանի համար, որ նա տեղեկութիւն չունի մի անպակի կարևոր խնդրի մասին, ինչպիսիք է Պարսէլի խնդիրը, որը անկողնի կերպով կապված է ամբողջ Իրլանդիայի ինքնավարութեան և Անդրլայի քաղաքական կեանքի հետ, — չէ կարելի: Չէ կարելի մի դրոշմ հասարակութիւնը, — ասում ենք, որովհետև ոչ թէ հասարակութիւնն է, որ չէ ուղղում ծանօթանալ օտար երկիրների քաղաքական մեծ դէպքերի հետ, այլ հայոց լրագիրներն են, որ ամբողջ էջեր նուիրելով մի որ և է երեցիտի անվերջանալի պատմութիւններին, և աղա-հողաբարձու ու խալիֆա-վարժապետի շնորհ ու կարողութիւնը, որ խեղճ ընթերցողների զահ-լան տանելով տիրացուների, սարկաւազների, երեցիտիներին և խալիֆաների հեղափոխումով, մուսուլման և կամք առնել օտար երկիրներում տեղի ունեցող այնպիսի նշանաւոր քաղաքական, հասարակական և անտեսական խնդիրները վրա, որոնք հայ ընթերցող հասարակութեան համար նայնքան հետաքրքրական և կրթիչ են, որքան և Ֆրանսիա-

է Մովսիսյան, ներկայ 1891 թ.ին, Մ. Բարխուդարեանի տպարանում:

Գրքի հեղինակն է Թիֆլիսցիներին լաւ ծանօթ, մեր թեմի նախկին առաջնորդ Արխանգէլս եպիսկոպոս Սեդրակեան:

Ի՞նչ է գրքի նպատակը: Մենք կարծում ենք, որ առանց երկարաբանելու կարող ենք այստեղ մէջ բերել գրքի 7-որդ երեսից հետևեալ տողերը, որոնք և կը բացատրեն ընթերցողին թէ ինչ էր հեղինակի նպատակը իր մեծ աշխատանքը պատրաստելու ժամանակ, որն աւարտելու համար նա գործ է դրել տարիներ և տարիներ: Ահա մեր յիշատակած տողերը.

ցու, սերբիացու, գերմանացու և ուստի համար: Չեւք էք առնում մի հայոց լրագիր, կամ ամսագիր. — կարդում էք անվերջանալի դատարկ լուրեր և նամակներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամենախառուր բաժանանքը զանազան անձանց վրա. կարդում էք իբրև թէ ներքին հարցերին վերաբերեալ երկար, տանտանկ թերթերից բաղկացած յօդուածներ, որոնք նայնպէս դուրս չեն դալիս բաժանանքների և շողջորթութիւնների շըր: Չանկց, և այդ բոլոր դատարկութիւնների կողքին մի քանի տող էք միայն գտնում այն նշանաւոր հարցերի վրա, որոնք իրարանցում են զոտմ ամբողջ եւրոպական մտաւոր աշխարհի մէջ, կամ շատ-շատ քաղաքական ծակ իրլանդիայութիւններ այն մասին, թէ արդեօք խաղաղութիւն կը լինի, թէ պատերազմ, թէ արդեօք այս ինչ պետութիւնը բարեկամ կը մնայ այն ինչ պետութեան, թէ ոչ:

Այդպէս են անում մեր լրագիրները: Իսկ Կ. Պոլսի լրագիրները՝ որոնք իբրև թէ առանձին ուշադրութիւն են դարձնում եւրոպական կեանքի վրա, իսկապէս աւելի յեղաշրջում են այդ կեանքի իսկական պատկերը, փոխանակ ճշդութեամբ ներկայացնելու իրանց ընթերցողներին: Պոլսի լրագիրները երբեք լրջօրէն կանչ չեն առնում եւրոպական որ և է երկրում յարուցված նշանաւոր խնդիրները վրա, այլ միշտ թողնելով այդ խնդիրները կարևոր կողմը և ներքին իմաստը, սկսում են հաղորդել իրանց ընթերցողներին այդ խնդիրների հետ կապված անեկզատներ և դէպքեր միայն:

Կրցուք եւրոպական հասարակաց կարծիքը ըզբաղեցնում է Գլադստօնի, կամ Բիսմարկի անտեսական կամ բարդախան մի նախադիմք. — թողնելով այդ նախադիմք լաւ կամ վատ կողմերը քննադատութիւնը, Պոլսի հայոց լրագիրները անմիջապէս սկսում են անեկզատներ հարողել իրանց առաջին երեսի վրա Գլադստօնի կամ Բիսմարկի մասին, պատմում են, թէ Գլադստօն քանի ժամ է աշխատել այդ նախադիմք վրա, քանի երեսներ է բաղկացած դա, ինչպիսի կարգիտում է գրված, կամ թէ Բիսմարկ ինչպէս էր կանգնած

«Որն է մեր եկեղեցու խակաւն, ամենամեծ արժանաւորութիւնը, — պահպանել անփոփոխ ինչ որ անփոփոխելի է, և փոփոխել այն, որ փոփոխութեան կարօտ է: Անփոփոխելի են եկեղեցու դաւանաբանական սկզբունքները, ճէսերն ու պաշտամունքները. փոփոխելի — այն կարգադրութիւններն ու օրէնսդրութիւնները, որոնց ինքն եկեղեցին է սահմանում իր վարչական և դատաստանական իրաւասութեան ենթարկված խնդիրների մասին, նպատակ ունենալով բարոյքի հաւատացեալների առանձին և ընկերական կեանքի սովորական պահանջները, որպէս զի արտաքին կենցաղավարութեան եղանակը չը խանգարէ ներքին, հոգեկան կեանքին՝ ընթանալու իր վերաբար ուղղութեամբ:»

Այդ տողերից արդէն երևում է թէ ի՞նչ է հեղինակի նպատակը. նա դիտաւորութիւն ունի, առանց խօսելու եկեղեցու որ և է դաւանաբանական հարցերի մասին, քննել մեր եկեղեցու բուն իրաւաբանական, կանօնական հարցերը, որոնք վերաբերվում են ընտանեկան և ընկերական կենցաղավարութեան համար ահապին նշանակութիւն ունեցող ամուսնական օրէնսդրութեանն ու կարգադրութիւններին, որոնց և անուանել է հեղինակը «Ամուսնական խնդիրներ»:

Եւ ճշմարիտ, հեղինակը մեր կարծիքով բարեխղճաբար գլուխ է բերել իր մտադրված աշխատանքը:

Կիրքը բաժանված է երկու մասերի. 1) Հաս ու ՀՀաս պատկեր և 2) Լուծումն ամուսնութեան:

Հեղինակը ոչ թէ միայն ընդհանուր և պարզ արամբանութեամբ, բայց և բազմաթիւ օրինակներով, դժուարանքներով, որ ինքն քաղել է մեր կոնստիտուցիոնալ օրագրութիւններից (գլխաւորապէս Ղարաբաղի

և Թիֆլիսի թեմի կոնստիտուցիոնալ օրագրութիւններից), ջանում է ցոյց տալ թէ որքան բազմաթիւ զեղծումներ են գործվում այժմ ամուսնական խնդիրներին, այն է հաս ու ՀՀաս պատկեր կաղելու և պատկերներ լուծելու վերաբերմամբ: Այդ բոլոր պերճախօս փաստերն ուսումնասիրելուց յետոյ, ընթերցողը կամայ ակամայ այն եզրակացութեանն է գալիս, որ եպիսկոպոս հեղինակի նպատակն էր ցոյց տալ թէ որչափ հնացել, ժամանակակից կենսական պահանջներին անհամապատասխան են դարձել մեր հայոց եկեղեցական օրէնքները ամուսնական խնդիրների վերաբերմամբ, որչափ միմեանց հակասող և զեղծումներին առիթ առող են մեր կոնստիտուցիոնալ և նոյն իսկ սինօդի կարգադրութիւններից շատերը վերջիշեղ խնդիրների վերաբերմամբ, և որչափ կարօտ են այդ օրէնքները, կանօնադրութիւններն ու կարգադրութիւնները՝ շուտապից թէ արմատական վերանորոգուելու, համեմատ ժամանակակից կեանքի պահանջներին:

Եւ ինքն հեղինակն էլ վերջացնում է իր գրքը հետևեալ խօսքերով:

«Մեր պարտականութիւնն էր միայն ամփոփ կերպով առաջ բերել հայ եկեղեցու՝ ամուսնական երկու տեսակ խնդիրների մասին ունեցած վարդապետութիւնը և օրէնսդրութիւնը: Մեր համատարաբար կատարելիքը: Մեզ մնում է միայն սպասել, որ եկեղեցու լրութիւնը լորրին ուշադրութիւն դարձնէ այդ փոփոխ խնդիրների ներկայ անհամապատասխան դրութեան վրա և բարահասի նրանցից առաջացած և առաջանալի շարժումների առաջն առնել, որքան կարելի է շուտով: Եւ այդ անկող ձեռնահաս կը լինի մի ազգային եկեղեցական ժողով, որը օրէնսդրական կատարեալ ներկայութիւնն ունենալով, և ուշադրութեան առնե-

«Կորչի լատիներէնը»: Պարսէլ տակն ու վրա է անում ամբողջ Իրլանդիան և դրադեցնում եւրոպական ամբողջ մասուրը. ամենքն էլ ուզում են տեսնել, թէ ինչ ու է իս ունի այդ երևելի իրլանդացին. — բայց արի ու տես, որ այդ բոլորից յետոյ հայոց ազգից բաժանորդներ աղերսող և մեծ խօստուածներ անող այդ պատկերազարդ հրատարակութիւնները իրանց էջն են քշում և տպագրում են այնպիսի պատկերներ, որոնք այժմ նայնքան հետաքրքրական են, որքան հետաքրքրական են եղել մեր պատկերի համար, և կամ այնպիսի պատկերներ, որոնց տեսնողը ամենից առաջ բացականչում է. «Սա ինչ մարդ է»:

Այդպիսի միակողմանի, սխալ, և եթէ կամենաք յիմար ընթացքը չնորմով, ի հարկէ, ընթերցող հասարակութիւնը զրկված կը մնայ արտաքին աշխարհի վրա մի ամփոփ գաղափար ունենալուց, նա զօրով կը մնայ օտար երկիրների հասարակական և քաղաքական կեանքի ամենանշանաւոր դէպքերի վրա գէթ համառօտ, բայց ճշգրիտ տեղեկութիւն ունենալուց, և կամայ ակամայ կը սկսի դառնալ ներքին բաժանանքներով և մանր մունր բաներով:

Երբ մամուլը միջոց չունի ներքին հարցերով դրադեցնել ընթերցող հասարակութիւնը, երբ մամուլը չէ կարողանում ստիպել հասարակութիւնը իր սեփական ցաւերի վրա նայելու, այն ժամանակ նա աւելի մեծ եռանդով պէտք է աշխատէ ընթերցող հասարակութեան մտքին հետաքրքրութեան նիւթ տալ արտաքին աշխարհից, ուշադրութիւն դարձնելով այդ արտաքին աշխարհի մէջ տեղի ունեցող այն տեսակ մեծ երևոյթիները վրա, որոնք իսկապէս այս կամ այն ազգութեան միայն չեն պատկանում, այլ կրթիչ, օրերիչ, հետաքրքրական և դարգացուցիչ են բոլորի համար, լինի դա հայ, ռուս, վրացի, ֆրանսիացի, յոյն թէ բոլորը:

Այդ տեսակ երևոյթիներից մէկն է Պարսէլի խնդիրը, որի առիթով մի քանի խօսք կատարեալ յաջորդ «Ակնարկներին» մէջ:

Խ. Աղ—էր



ՆԱՄԱԿ ԹԻՐԻՒՆՅԵՐ

Չուլամբերի, 17 նոյեմբերի

Այս գաւառը, որը վանից 24 ժամ հեռաւորութեամբ գտնուի գաւառին կրած մի լուսնու և տեղ տեղ անտառային անդրադարձերով երկիր է, մեծ մասամբ բնակված է ասորիներով: Երբեք, որովհետև մէջը շատ քիչ հայ կայ, իսկ քիչ-քիչ և տաճիկ բոլորովին աննշան: Ասորիք հաշուով են 70—80 հազար, իսկ ընդհանրապէս 6—7000:

Ստորագրողը, սկսած Չուլամբերի աւանից մինչև զիւղերը կառավարվում է կոշանիսում նստած Մար-Շիմնի ասորաց կրօնապետի ձեռքով: Բոլոր հարկերը, որոնք վճարվում են օսմանեան կառավարութեան, ժողովում են մեկընդմիակ, յանձնում Մար-Շիմնին և սրան է միայն, որ տեղութիւնը ձանաթում է: Այս երկիրը ծանօթ է ոչ հարկահատի, ոչ միւլթէզիներին և ոչ օսմանեան այլ գետնաւորների վրա տեղացող բազմաթիւ սուրբերի հետ: Ինչը Մար-Շիմնը մինչև իսկ, իբր կրօնապետ, ստանում է տեղութիւնից մտաւարապէս 8000 լիբրայի մի սոճիկ: Ասորիք Չուլամբերիում քրիստոնէութեամբ են իրանց հոգեւոր և հնազանդութեամբ են միմիայն Մար-Շիմնին: Մար-Շիմնի պատրիարքական տունն է կազմում այն գիւղը, որը կանգնեցրած է մի խոր անտառապատ ձորի զիւղին և որը անուանվում է կոշանիս: Կոշանիսում բացի պատրիարքական բազմաթիւ ընտանիքից և դրանց ծառաներից, չէ բնակվում ոչ ոք:

Պատրիարքական այդ նահապետական ընտանիքը բաղկացած է աւելի քան 80 անձերից, որոնք սեռվում են Մար-Շիմնեան եօթ եղբայրներից:

Ասորաց այս կրօնապետները, որոնք սրանից 1200 տարի առաջ, ըստ իրանց պատմութեան, կոչվում էին Մար-Շիմնի, այժմ կրում են «Մար-Շիմն» մականունը:

Մար-Շիմնիները ընտրվում են ժառանգաբար, անպատճառ պատրիարքական տնից և նրանք, որոնք յանձն են առնում կրօնապետի մնալ և մի համը չը տեսնել: Գրա համար էլ, երբ պատրիարքարանի ընտանիքները մի կին յղանում է, յղանալուց աչս նա պարտաւոր է միս չուտել, մինչև տղայի ծնից կարելը, որից յետոյ բոլոր ծնածները կրում են հաւասարապէս Մար-Շիմն լինելու իրաւունքը: Երբ գահի վրա նստող մեռնում է, այն ժամանակ միայն, ծնածներից ով որ գիտուն է, ժողովրդական և կրօնական մնալու կարող նրան զնում են թափուր մնացած գահի վրա: Ետեղից գահի վրա, Մար-Շիմնը, որը ճնց սկզբից մի համը չէր տեսել, գտն էր ազգականները հասակակից որոշոց ազատում է դրանց և թոյլատրում ամուսնանալու. այսպիսով կրօնապետները միշտ ընտրվում են այդ նահապետական ընտանիքից, որը, իրանց ասելով, 1600 տարի է, որ դուրսիւն ունի և կրէք չէ ոչնչացրել—անհետացրել իր սերունդը:

Այժման Մար-Շիմնը ունի 7 եղբայրներ, որոնք որդիներ, բոլորը, զբոժ որդիներ և մի որդայր, որը կոչվում է սուլթան և պատրիարքական տան այժմեան կոչն է: Ամեն մի Մար-Շիմնի ժամանակ, եղև են պատրիարքարանի կոչներ, այսինքն ընտանիքից մի աղջիկ անպատճառ կոչ է լինում, եթէ իրանից նախկին կոչը մտաւ: Թէ կոչը և թէ Մար-Շիմնը միս չեն ուտում և այդ բացատրում են նրանով, որ միտը ցանկութիւններ է յարուցանում, իսկ այդ երկուսը պիտի չուսնան ցանկութիւնների:

Այժման Մար-Շիմնը 45 տարեկան յաղթանակով, առողջ, երկիր, լի վնասնան զէնքով մի ան է նրա հազուադէպ այսպէս է: Հազում է լայն կարմիր շալվար, կողքերը ոսկեթելով ասեղնազարդած, սրունդները նեղ. կապում է լայն թիւղայի շալի գօտի, որի մէջ իրված կան արծաթե կոթիկներով դաշոյններ և ասորեանակներ—ասորաց այս վնասաւոր, ինչպէս և իր բոլոր ասորացեալ կրեականութիւնը և ժողովուրդը ասանց զէնքերի չեն մանաւախ: Վերի կողմից Մար-Շիմնը ունի հազած Հալէբի մանուսալից մի կարծ արկաւորդ, որի ծայրերը դրված են շալվարի մէջ: Բոլորը վրայից նա կրում է ոսկեթելով բանված այծէ սորթիլ ք և աղ ախիկը—նրանցին ժողովրդական սովորական բաճկոնը: Չիւլի նա կրում է քէօլորդ մետաքսեայ կաշու մանրով փաթակած:

Մար-Շիմնի պէս է հազում ամբողջ կղերա-

կանութիւնը և ժողովուրդը: Բնաւորութեան կողմից այժմեան Մար-Շիմնը մի անդրադարձ, վնասնան մարդ է, իսկ ժողովուրդը, բարեկամ հայերն: Ասորի ժողովուրդը պաշտում է ոչ միայն իրեն—Մար-Շիմնին, այլ և նրա կողմից ուղարկված մի որ և իցէ հասարակ ծառային Պատրիարքական ընտանիքի բոլոր անդամները նուիրական են համարվում թէ Չուլամբերի, թէ այլ գաւառների և թէ նոյն իսկ Պարսկաստանի ասորիների համար: Ժողովուրդը ոչ միայն ուրախութեամբ տալիս է Մար-Շիմնի կողմից նշանակված հարկերը և պողին, այլ և աւելացնում է դրանց վրա իր ընծան թէ վնասաւոր և թէ պատրիարքական տան անդամներին:

Մար-Շիմնը, երբ խաղաղութեան ժամանակ է, իր երկիր կատարեալ տէրն է, կըր եկեղեցու մէջն է՝ կրօնապետ է, իսկ եթէ մի որ և է թըշնամի ազգ վերաւորից իր ժողովրդի մի մասին անգամ, նա հեծնում է իր ձին, վաղեցնում է բոլոր մէկընդմիակ, իր արգազնաս սուրհանդակներին և ահա մի քանի օրից յետոյ կոշանիսի «զուտ կանի թմբուկի» շուրջն է հաւաքվում ամբողջ ասորի ժողովուրդը, զինված և պարտաւոր իր կենսը, պատելը և հայրենի լեռները պաշտպանելու. Մար-Շիմնը ընդհանուր սպարապետն է, նա է, որ սուրը ձեռքին առաջ է ընկնում, և ինչպէս որ օրհնում էր եկեղեցում իր առջև չուցած ժողովրդին, նոյն կերպով էլ նետով թըշնամու վրա, իրանոյս տալիս իրանց հայրենիքի անկասկածեան համար կուտոյ ամբողջին:

Այդտեղ կանոնաւոր դօքը, կրթութիւն, ոչ չինչ չը կայ, բայց կայ մի սովորական համոզմունք, որ ամեն մի ասորի ունի, այն է, թէ Եզրի մուսնը հայրենիքի անկասկածեան համար, բայց մի և նոյն ժամանակ պիտի աշխատել ընկնելով՝ ոչնչացնել առ նուազն 5 թշնամու..... Այսպէս է մեծանում Չուլամբերի ասորին, փոքրութիւնից վարժվում զէնքերով խաղալ:

Չուլամբերի անառիկ կողմերի մէջ կան զիւղեր, որտեղից եթէ համարձակվի թիւրքը, կամ ջրիւրը անցնել, նա կը մնայ սպանված մի թիվի մէջ և կամ մի քարի կտուր: Ազատ մտաք ունի միմիայն քրիստոնէան: Մուտք և պատել և նոյն իսկ մեծ ազդեցութիւն ունի այստեղ անգլիացիները և այն բանալու: Եւ ահա 3—4 տարի է, որ պատրիարքական տան համար, եպիսկոպոսական բողոքականները մի ուսումնարան են բաց արել կոշանիսում: ասորիները այդ և միւս գաղութները ու բողոքականների վրա չեն կարողանում հաշտ աչքով նայել, սակայն որովհետև 3 տարի է, որ մուսուլ է ասորաց մեծ գիտուն Մար-իօշվանը, որի հուշակը հասել էր մինչև Եւրօպա, պատրիարքական տունը, ստիպված, իր որդիներին ուղարկում է բողոքականներ ժոտ և միշտ հանում է, որ բողոքականը չը դիպչէ հայրենական կրօնին:

Ինքն, Մար-Շիմնը քաջ հմուտ է ասորաց զբոսականութեան, և շատ զօրութեամբ է ժողովրդական լեզուով խօսում: Պատրիարքական տունը ունեցել է դաստիարակներ, որոնցից մէկն էր վերջինեալ Մար-իօշվանը, որի մտանկուց յետոյ այժմեան Մար-Շիմնը յոյս է տածում, որ չէմէչէ (տիրացու) իւխանան կը բանի այդ մեծ գիտունի տեղը:

Իրաւ է, չէմէչէ իւխանան մի դարգացած և խորհայեաց երկտասարդ է, սակայն դեռ նրան ասորի ժողովուրդը չէ ճանաչում: Չուլամբերի պատրիարքարան գնացողը, եթէ կամենում է իբր բարեկամ ընդունվել անից և պատրիարքից, նա պարտաւոր է նախապէս տեսնվել չէմէչէ իւխանայի հետ և սիրելի դառնալ նրան:

Չուլամբերի, ասորաց կեանքը, պատրիարքական տունը այնքան հետաքրքիր նիւթեր են մի ճանապարհորդի համար, որ տարիներից ի վեր անգլիացի ճանապարհորդներ չեն դադարում մտնել այս գաւառի խորքերը, ուսումնասիրել ժողովրդի կեանքը, հիւանդ նրանց համարչալ կեանքի վրա, գմայվել նրանց բաժնութեան վրա, նկարել նրանցից դանազան արկեր, Չուլամբերի անառիկ զիւղերը, անդրադարձ ձորերը և անտառները:

Չիւլ-Ֆերի, պաշտպանելով իրան այն մեղադրանքների դէմ, որ ինչն իբր թէ աշխատում էր Գերմանիայի հետ բարեկամութիւն կապել, հաստատում է, որ ընդհակառակն, ինքն նպատա-

տում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ բարեկամութեան հաստատվելուն:

—Լեոն XIII պապը ծառայութիւնից արձակից վատիկանում այն բոլոր խաղաղական հպատակներին, որոնք կառնածվում են լրտեսութեան մէջ:

—Կաղիքներին հետադրում են, որ Ելզաս-Լօթարինդեան մասնաժողովը անդամները զեկտեմբերի 26-ին գնացին Ֆիւլ-Ֆերիի մօտ նրա սենատոր ընտրվելը չնորհաւորելու: Գնորհակալութիւն յայտնելով, Ֆերիի ասեց, որ իր սիրտը պատկանում է Ելզաս-Լօթարինդիային և որ ինքն նուիրված է այդ նահանգներին շահնրին:

—Համբուրգից հեռագրում են յունիարի 2-ից, որ նոր ասորաց օրը իշխան Բիսմարկ մի երկար ինքնազիր նամակ ստացաւ Վիլհելմ II կայսրից:

—Ընօնցից հաղորդում են, որ Գլադստօն զեկտեմբերի 17-ին, երբ նրա 81 տարին լրացաւ, անթիւ չնորհաւորական հեռագիրներ, նամակներ և ընծաներ ստացաւ միացեալ թագաւորութիւնների բոլոր ծայրերից, նոյնպէս և Եւրօպայից և Ամերիկայից: Ուէլսի իշխանը և իշխանուհին առաջիններիցն էին, որ նրան հեռագիր ուղարկեցին Հօլարդէնեան ամրոցը: Անգլիական համարեա բոլոր աղետամիտ կլոսները չնորհաւորական աղբիւնր ուղարկեցին: Զառամաւ պետական գործիչը իր ծննդեան օրը անցկացրեց իր ընտանիքի շրջանում: Եւ Երան կատարելապէս առողջ էր դրում և կէսօրից յետոյ ներկայ էր իր օսկէ պատկի առկթով հօլարդէնեան հասարակութեան հաշտով կառուցած հոյակապ Փօնտանի հանդիսաւոր բացմանը:

—Գեկտեմբերի 11-ից, Կ. Պօլսի հայոց պատրիարք Պօլսի լրագիրներում տպագրել է հետեւեալ հրատեղը, ուղղած Ազգային Ժողովի երեսօխմաններին. «Մեր Օրոտտաբառ կայսերներկայութեանը հրաւիրուեալ պատրիարքն ունենալով Երօսի կայսերական վահապետութեան ինչ ինչ հայրական բարձր հրամանները Ազգային Ժողովոյ հազորելու համար կը հրաւիրեմ զԱզգային երեսօխմանս որ յառաջիկայ ուրբաթ, 14 զեկտեմբեր, ի ժամ 7, ներկայ գտնուին ի խորհրդարանն Ղալաթիոյ»:

—Կ. Պօլսի լրագիրներում տպագրված է զեկտեմբերի 13-ից. «Տպագրական Տեսչութիւնն այս առուր թուրք լրագրաց միջոցաւ կը ծանուցանէ թէ Տրապիզոնէն ու Նիկիւրիէն եկած զեկտեմբեր 9 և 10 թուական հեռագրերու համաձայն, այդ նահանգաց մէջ չնորհւ. վ.է.հ. Սուլթանին կատարեալ անորոշութիւն կը տիրէ»:

—Գեկտեմբերի 13-ին «Արեւելքում» կարգում ենք. «Երբեման Սրբազան Հայրն որ ժամանակէ մը հեռէ հիւանդ էր, նախորդ շաբթուն փոքր ինչ ապաքինած ըլլալով, կրցաւ դուրս ելլել և այցելութիւն տուաւ Տ. Խորէն Ա. Պատրիարք հօր: Խորման Սրբազանի տկարութիւնը մէկ երկու օրէ ի վեր կրկնուած ըլլալով, Ն. Ամենապատուութիւն վերստին անկողնոյ կը ծառայէ Գուղլուեճուքի եկեղեցոյ իր ընտանիքին մէջ»:

—Գեկտեմբերի 17-ին «Արեւելքում» կարգում ենք. «Երբեման Հայրիկ յառաջիկայ հինգշաբթի օր պիտի ուղևորի Երուսաղէմ: Ապա զեկտեմբերի 18-ին «Արեւելք» տպագրել է հետեւեալը: «Ըստ տեղեկութեանց Սաատէթի, Երուսաղէմ նախարարութիւնն հրահանգ ուղղած է Երուսաղէմայ կառավարչին, որպէս զի ցորչալի Երուսաղէմ մնայ յորիմեան Սրբազան, Ն. Ամենապատուութեան յատուկ ամսաթիւնով վճարուի տեղւոյն կառավարական սնուկէն»:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Հօսով պապի եկամտաները, ըստ երեոյթիւն, պակասում են: Լեոն XIII պապը դառն կերպով զանգատում է այն բանի դէմ, որ 1890 թիւին նախընթաց տարիներից կէս միլիոնով աւելի պակաս եկամուտ է ունեցել ու. այժմ որ: Այդ պատճառով 1890 թիւի եկամտով 200,000 Ֆրանկի դուրս է պակասում եկամուտը ժամային հետ հաւասարակընկու համար: Երկրի, այդ պատճառով, Լեոն XIII պապը անհրաժեշտ համարեց հրամայել, որ վատիկանի թանգարանը և պատկերահանդէսն այցելողներին մուտքի փող առնեն:

Այս օրերս Բերլին հասաւ երկաթուղային մի վագօն, որ յարմարեցրած է զինի տեղափոխելուն: Մինչև այժմ անկարելի էր սաստիկ շրջի կամ ցրտի ժամանակ զինի տեղափոխել: Ամառը զինին թիվում և պղտորում էր, իսկ ձմեռը կարող էր սաստիկ կտրվել: Ետեղ, որոնք ձմեռեան օտնեքին, սաստիկ ցրտերի ժամանակ, պինդ էին բերել տալիս, արկղում կամ տակաւում դնուա փոխանակ շատ անգամ սառուցի կտորներ էին գտնուած: Գառուէլ եղբայրները վա-

գօնային գործատուը Մանչուս անյալիսի վագօնների է հնարել, որոնց միջի օղը մշտ հաւասար տարութիւն է պահպանում:

Ֆլորէնտինեան ընդհանուր պրօպարը այս օրերս հրամանադրեց յարձուինս գրաւել Զիօր-դանօ-Բրուճի յիշատակին նուիրված մի բրօշուր: Այդ բրօշուրի մէջ, որը մտադրութիւն կար ձրի տարածել,—որպէս ասում են,—սաստիկ յարձակմունքներ կան իտալական այժմեան հիմնարկութիւնների դէմ: Այդ բրօշուրը դրել են բաղմաթիւ յայտնի պուբլիցիստներ:

Կանում մի 25 տարեկան կին ծնեց երկու աղջիկներ, որոնք մէջքերով կրած են միմանց, որպէս Միամի երկրորակները: Երկուսն էլ առողջ են:

Թող ուրախանան Սօֆօլիլ, Էլիւրայիդի և Պլատօնի երկրպագուները: Երբեք կայացաւ Սիւֆօրդի համալսարանի պրօֆէսորների ընդհանուր ժողովը, որի նպատակն էր քննել մի քանի «առաջադէմ» պրօֆէսորների առաջարկութիւնը: Կան ճանաչարանական քաղաքից յոսնարէն լեզուի ուսումնասիրութիւնը, կամ զոնէ պարտադիր ստարկայ չը համարել այդ լեզուն: Սակայն այդ առաջարկութիւնը մերժվեց 39 ձայների առաւելութեամբ 20-ի դէմ, և այդպիսով հեղինակները այս անգամ էլ փրկվեց:

«New-York World» լրագրի հրատարակիչ Յովսէֆ Պուլիցը ծախեց իր լրագիրը 10 միլիոն րուբլով: Պուլիցը «New-York Herald» լրագրի թղթակից էր Բուլգարիցում վերջին ուսումնարան պատերազմի ժամանակ:

Անգլիայում նորերս հրատարակված «Գրական օրին» վերնագրով մի գրքի մէջ պատմում է, որ ամերիկական գրականագէտ Բիւէլ անցեալ տարի իր գրքերից ստացել է մօտ 50,000 դոլլար եկամուտ: Այդպիսի մի եկամուտ ստանալու համար արեղօք օրբան զիւր պէտք է ծախվել: Կարելի է կարծել, թէ դա ժամանակակից նշանաւոր գրողներից մէկն է, բայց դժուար թէ մեղանում շատերը լսած լինեն դրա անունը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՄՍՍԵՒՆ ԳՈՐԾԱՍԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԳ, 31 զեկտեմբերի: Յայտնի վերաբայ թէյեր վախճանից:

ՊԵՏԵՐՈՒԳ, 1 յունվարի: Հրատարակված է Ֆինանսների մինիստրի ամենահպատակ զեկուցումը 1891 թիւի պետական եկեւաւորի մասին, սովորական մուտք սպասվում է՝ 897 միլիոն, անցեալ տարվանից 8 միլիոն րուբլով աւելի. սովորական ծախս հաշուած է՝ 895 միլիոն, անցեալ տարվանից 7,800,000 րուբլով աւելի: Սուտքը ծախսից աւելի է սովորական բիւջէտով 1,868,000 րուբլով: Արտակարգ ծախսերի համար նշանակված է 63,400,000 րուբլի: Իր զեկուցման վերջում դառնալով Երօսի կայսերական Մեծութեան, Թագաւոր կայսրի բռնած քաղաքականութեան, ասում է: «Ամբողջ Ռուսաստանը յոյս ունի, որ այդ բարերար քաղաքականութիւնը ապագայումն էլ, ինչպէս մինչև այժմ, Աստուածային յայտնի հովանու և օրհնութեան ներքոյ առաջ կրնանայ կատարեալ անդադրութեան ի փառս Ձեր Մեծութեան Թագաւորութեան և ի բարօրութիւն ամենահաւատարիմ և անսահման կերպով Ձեզ և ամբողջ Թագաւորական տան նուիրված ուսու ժողովրդի»:

ԲԵՐԼԻՆ, 1 յունվարի: Պաշտօնական զիսխոտը լիջցրած է մինչև 4%:

ՊԵՏԵՐՈՒԳ, 1 յունվարի: «Новое Время» լսել է, որ հարց է յարուցված կատարելապէս կերպարանափոխելու հաղորդակցութեան ճանապարհների շրջանները: Վերաբայ թէյերի մասը առաջ է եկել մի դժբաղդ զէւրքը որսի ժամանակ. որսին սպասելով թէյեր ննջեց. հրապանի ձայնը լսելով, նա յանկարծ արթնացաւ, և այդ ժամանակ անհրաժեշտ դիպու. հրացանի հրահանին, այնպէս որ հրացանը տրաքեց և գնտալը ծնօտին զիպչելով, մտաւ զլիւի մէջ:

ԲԵՐԼԻՆ, 3 յունվարի: «Medizinische Wochenschrift»-ի մէջ, որը լայս պէտք է տեսնի վաղը, զօլտօր կօխ բացատրում է, թէ ինչ կերպով նա գտաւ իր բուժիչ միջոցը և թէ ինչպէս էր պատրաստվում: Այդ միջոցը հետեւանք է նիւթերի փոխանակութեան, հասանօրէն սպիտակուցային մարմին, բայց ոչ թէ սոսկաւրումին, նա սպանում է կենդանի պրօթօպլազման և հասցնում է բացիլը մեռնելու դրութեան, զրկելով նրան աճելու համար հարկաւոր պայմաններից: ՊԵՏԵՐՈՒԳ, 3 յունվարի: Վախճանից զիւ-

